որկրամոլ, որ յաւուր բարեկենդանի միոյ ագահեալ ուտէր և ըմպէր մինչ 'ի լուսանալ պահոցն. ապա յետ ննջելոյն յարուցեալ 'ի քնոյ՝ մնացած ինչ մսոյ եգիտ յատամունսն, զի Հոռոմք ոչ ունէին սովորութիւն յետ հացին լուանալ զբերանս իւրեանց և մաքրել. ապա կոչեաց զեպիսկոպոսն, և հրամայէ նմա՝ զի նզովիւք չափ կանոնեսցէ զվերջին բարեկենդանն առանց մսոյ առնել, և այս մնաց մինչև ցայսօր 'ի մէջ Յունաց:

Զենոն երկրորդ, որ և հալածեաց զՔաղկեդոնիկսն: Սա կամեցաւ զորդին Լևոնի սպանանել, բայց մայրն իւր զորդին պահեալ, և զոմն օտար մանուկ մնուցեալ՝ որպէս զիւր որդի, զոր տարեալ սպանին:

Անաստասիոս սկսաւ յամի Տեառն Ն.Ղ.Ա. ինքնակալեալ ամս Ի.Է.: Սա միաբնակ էր և օգնական Հայոց և Ասորոց,

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան